

Ատրպէյճանի Գաղթական Հայերուն Ողբերգութիւնը

Արցախի իրավիճակին կապուած խնդիրը իր ընդունելի ժամանակաւոր լուծումը գտաւ, երբ Մոսկուա վերջապէս որոշեց Ինքնավար Մարզը վարչականօրէն անջատել Պաքուէն եւ ենթարկել իր իշխանութեան: Մինչեւ երկար յապաղումով տրուած որոշումը, Արցախի եւ - այս մասնաւոր պարագային - մանաւա՛նդ Ատրպէյճանի հայութիւնը վճարեց բարձրագոյն գինը իր կեանքով, ինչքի կորուստով եւ, մէկ օրէն միւսը, դառնալով գաղթական՝ աւուր հացի կարօտ:

Մի քանի օրեր առաջ, Փետրուար 28ին, Արցախի եւ Հայաստանի հայութիւնը գնաց խոնարհիլ մեր օրերու ազգային ողբերգութեան խորհրդանիշը դարձած Սումկայիթի զոհերու յիշատակին առջեւ: Ծիծեռնակաբերդը, որ վկայարանն էր 1915ի Մեծ եղեռնին, Սումկայիթով դարձաւ խորհրդանիշը գլխադիր Ցեղասպանութեան եւ հակահայ ցեղասպանական բոլոր արարքներու:

Այս առթիւ կ'ուզենք ընդգծել Հայաստանի եւ Արցախի ղեկավարութեան ողջախոհ քաղաքականութիւնը երբ, հակառակ տիրող ստիպողական վիճակին, չընդդիմացաւ որ երկրաշարժի աղէտէն կրկնակի սգաւոր հայութիւնը հակի Ատրպէյճանի իր մարտիրոս եղբայրներուն յիշատակին առջեւ: Իշխանութիւններուն կողմէ հակառակ դիրք մը՝ պիտի ծառայէր պարզապէս խորացնելու ժողովուրդին դառնութիւնը եւ տկարացնելու ժողովուրդ-ղեկավարութիւն դիրքակապը, մեզ ետ տանելով 1960ական թուականները, երբ Ապրիլ 24ի առթիւ արգիլուած էր նոյնիսկ հաւաքուիլ Երեւանի գերեզմանատունը Կոմիտասի շիրմին շուրջ...: Յատկապէս գնահատելի կը գտնենք Արքատի Վոլսկիի անձնական օրինակը, երբ իրբեւ Արցախի ղեկավարման Յատուկ Ցանձնախումբին նախագահը, յանձնախումբին միւս անդամներուն հետ Ստեփանակերտի մէջ գացած է ծաղիկներ դնելու Սումկայիթի զոհերուն նուիրուած յուշարձանին առջեւ: Իր պատասխանատուութեան գիտակից ղեկավարի վայել այս արարքով, Խորհրդային այս պատասխանատու ղեմքը ընդունած կ'ըլլայ Սումկայիթի սպանդին իմաստը ու նաեւ քաղաքական պատգամ մը ուղարկած կ'ըլլայ Պաքուի, որ ցարդ, ինչպէս Անգարա, կը մերժէ ճանչնալ իր ծանր պատասխանատուութիւնը՝ 1988 Փետրուարի վերջին օրերուն կազմակերպուած «բոկրոմ»ներուն:

Սումկայիթը ցարդ կը մնայ դատական բաց թողթած մը, զոր զարմանալիօրէն ձեռք առնելու կը վարանին Խորհրդային իշխանութիւնները: Անոնցմէ պահանջուածը, ի վերջոյ՝ առջ... հողային կցում է եւ ոչ ալ «հակասահմանադրական» պահանջ, այլ պարզապէս ընկերավարական այդ հսկայ երկրին օրէնքներուն համապատասխան արդար դատավարութիւն մը հասարակական կարգի ոճրագործներու դէմ, ուր որ ալ գտնուին անոնք - գործարաններու աշխատակորներու շարքերուն թէ Հանրապետութեան բարձրագոյն ղեկավարութեան պալատներուն մէջ, անոնք կոչուին Եաֆար ձաֆարով թէ՛ Ա. Քարտուղար Միւսլիմ Զատէ, Բ. Քարտուղար Պայրամովա, Զօր. Կրաեւ կամ այլ Գանիֆաբեւներ եւ Մամբրովներ: Առանց այս բաց դատավարութեան ոչ միայն կասկածի եւ անվստահութեան ստուերը պիտի տարածուի Ծիծեռնակաբերդ յառաջացող հարկեր հազարաւոր սգակիրներու եւ երկրին գերագոյն իշխանութիւններուն միջեւ, այլ փերեսթրոյքան է որ իր կողին ստացած պիտի ըլլայ առաջին ատրպէյճանական նիգակի հարուածը, որ պիտի վտանգէ անոր բարոյական առողջութիւնը:

Սումկայիթը, Կիրովականը, Աղտամը յառաջացուցին հայ ազգային եւ մարդկային աննկարագրելի ողբերգութիւն մը, որուն առաջին փուլը վերջ գտաւ 190,000 հայերու գաղթականութեամբ, առանց մոռնալու շուրջ 130,000 ազերիները, որոնք Հայաստանի մէջ շատ աւելի հաստատ իրաւատէքն էին երկրին եւ հողին քան Ատրպէյճանի մէջ, ուր գացին բնակելու: Արդ, այդ տնագուրկ եւ յաճախ գործազուրկ հայութիւնն է որ այժմ կը գտնուի կրկնակի ողբերգութեան մը առջեւ, երբ իրեն կը պարտադրուի վերադառնալ հոն՝ ուրկէ լեղապատառ փախած էր փրկելու համար իր կեանքը:

Կորպաչովի ծանօթ յայտարարութեանէն ետք, թէ երկու հանրապետութիւններէն փախած զանգուածները պէտք է վերադառնան իրենց տունները, անմարդկային բռնարարք մը կը կատարուի հայերը ետ ղրկելով Ատրպէյճան, երբ նկատի առնենք հայերուն Ատրպէյճանէն դուրս ելլելու պայմանները: Պաշտօնական աղբիւրներու համաձայն, ցարդ 44 հայեր արդէն վերադարձած են իրենց քաղաքները փոխան չորս հազար ազերիներու, որոնք վերագտած են իրենց բնակարանները:

Կորպաչովի յայտարարութեան ետին կը կենայ երկրին եւ իրավիճակին գերագոյն պատասխանատուին մտահոգութիւնը, որ բացատրելի է առանց երբեք արդարանալի ըլլալու: 190,000 հայերու Հայաստան - եւ հակառակ ուղղութեամբ ազերիներու - աքսորը մեծագոյն հարուածն է, որ պետութիւն մը կրնար ստանալ, մանաւանդ երբ ան եօթ տասնամեակէ ի վեր աշխարհին կը ներկայանար որպէս ժողովուրդներու միջեւ ազգային, ցեղային, կրօնական եւ դասակարգային բոլոր հարցերուն լուծման բանալին ունեցող իրաւակարգ

եւ իշխանութիւն: Ու յանկարծ այդ վարկածն է, որ յօդս կը ցնդէր իր հարաւի մէկ հանրապետութեան մէջ, ուր տեղի կ'ունենային կրօնական մոլեռանդութենէ մղուած ցեղապաշտ ջարդեր: Իրերու այս կացութեան մէջ Մոսկուայի պատասխանատուութիւնը սկսաւ այն վայրկեանէն, երբ ան ի վիճակի չեղաւ երկաթեայ բռունցքով անմիջապէս ճզմելու կարգը եւ պետութիւնը հարուածող այդ արարքներուն բոլոր պատասխանատուները, Խորհրդային ժողովուրդներուն դատարանին յանձնելով բոլոր ոճրագործները: Կեղրոնական կառավարութեան այս դիրքը որպէս տկարութիւն մեկնաբանուեցաւ Պաքուի կողմէ, որ շարունակեց հակահայ հալածանքը հանրապետական չափերով: Ընդդէմ է, որ Խորհրդային զօրքերը յաջողեցան նուազագոյնի իջեցնել չարիքը, երբ անցեալ Հոկտեմբերին պաշտպանեցին հայկական տունները եւ հաստատութիւնները՝ նոյնիսկ ի գին երիտասարդ զինուորներու կեանքին: Նոյնքան նաեւ ճիշդ է, որ այդ բանակայիններն են որ օգնեցին հայերու պարպումի գործողութեան, յաճախ զինուորական ուղղաթիռներ տրամադրելով փախստականներուն: Այլ խօսքով՝ Ատրպէյճանէն հայերուն ապահով փախուստը պաշտպանուեցաւ եւ դիւրացաւ Խորհրդային բանակին կողմէ: Այս իրողութիւնը ներհակ պաշտօն եւ առաքելութիւն մը տուած կ'ըլլար երկրին իշխանաւորներուն եւ բանակին, որոնց պարտականութիւնն էր հայերը - սովետական այդ հաւատարիմ եւ գործունեայ քաղաքացիները - պահել իրենց տուններուն եւ աշխատանքներուն մէջ:

Ջարդուելու սարսափը ապրած այդ զանգուածներուն է, որ այժմ կը պարտադրուի «տուն» վերադարձը: Նախ ի՞նչ ապահովութիւն կայ որ մօտիկ կամ հեռուոր ապագային, երբ որեւէ պատճառով Ատրպէյճանի մէջ մթնոլորտը դարձեալ գորշ դառնայ, մահուան մանգաղին դիմաց կամ թշնամական մթնոլորտին մէջ հայերը ստիպողաբար պիտի չլքեն առնուազն Ատրպէյճանի կարգ մը շրջանները: Պէտք է մտահան ընել, թէ Սումկայիթի եւ Կիրովականի հեղինակները փողոցի «խուլիգանները» չէին, այլ Ատրպէյճանի ղեկավարութիւնը եւ ոստիկանութիւնը:

Ոչ մէկ տրամաբանութեամբ, խղճմտանքով եւ վարչագիտութեամբ կարելի է հարկադրել զոհին, որ՝ երթայ դարձեալ ծուարելու բորենիին դունչին տակ: Սումկայիթը ցոյց տուաւ որ - ինչպէս հայկական առածը կ'ըսէ Գորիսի բարբառով - «Վագրն ու եղնին մին ճնապաւ քինալ չեն», կարելի չէ որ հայ-եղնիկը երթայ ազերի-վագրին ուղիէն:

Խորհրդային «բարձր քաղաքականութեան» զոհ պէտք է երթայ հայութիւնը: Անոր դէմ է որ նաեւ իր գայրոյթը կը յայտնէ Հայաստանի Գրողներու Միութեան ժողովը Հայաստանի իշխանութիւններուն դրկած իր բողոքագրերով, ուր ղեկավարութիւնը կը մեղադրուի իր «հաշտուողական, ոչ-սկզբունքային, հակասահմանադրական, մարդու իրաւունքներն անտեսող քաղաքականութեամբ»: Միւս կողմէ հայ գրողները մատնանիչ կ'ընեն թէ ատրպէյճանցիներու Հայաստան վերադարձով Պաքու կը հետապնդէ «ժողովրդագրական հաշուարկ»ի յետին հաշիւներ:

Ատրպէյճանէն փախստական հայերը Հայաստանի մէջ վերջապէս գտան ոչ միայն ապահով երկիրք, այլ եւ միակ հայօրէն ապրելու հայրենիք: Անոնք տասնամեակներ շարունակ զրկուած էին մայրենի լեզուն եւ մշակոյթը ազատօրէն գործածելու եւ զարգացնելու ամէն կարելիութիւններէ, իսկ ձուլուած թափանցած էր անոնց տան սեմէն: Ողբերգական ահաւոր պայմաններու մէջ հիմա որ անոնք կարելիութիւնը ունեցան մարդկօրէն եւ հայօրէն կեանք մը վերսկսելու, անոնց կը պարտադրուի կրկնակի գաղթականութիւնը եւ իսկական աքսորը:

Ոչ մէկ անձ եւ ոչ մէկ հայ կրնայ համաձայն ըլլալ նման քաղաքականութեան մը, ու մենք, մեր ձայնը միացնելով հայրենի գրողներուն կը սպասենք, որ Հայաստանի իշխանութիւնները «վճռական գործողութեամբ մը դէմ կենան հակահայկական այդ քայլերուն եւ փախստականներու Հայաստան տեղաւորման գործը դնեն պետական հիմքերու վրայ»:

— Վագրն ու եղնին մին ճնապաւ քինալ չեն...

BAIKAR ARMENIAN WEEKLY
 ISSN 0741-8396
 An A.D.L. Publication
ՊԱՅՔԱՐ ԵԱԲԱԹԱԹԵՐԹ
 Պաշտօնաթերթ Ռամկավար Ազատական Կուսակցութեան
 Ամերիկայի Արեւելեան Երջանակի
 Published weekly except two weeks in July by:
Baikar Association, Inc.
 468 Mount Auburn Street, P.O.Box 302, Watertown, MA 02172
 Telephone: (617) 924-4420
 Telex (TLXI): 928436 (BAIKAR/MIRROR) • FAX (617) 924-3860
 Editor: **KRIKOR KEUSSEYAN**
 Subscription Rate: \$50 per year
 Advertising: \$5.00 per column inch
 Second Class Postage paid at Boston, MA
POSTMASTER: Send address changes to **Baikar Armenian Weekly**,
 P.O.Box 302, Watertown, MA 02172